ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Չնայած սեփական հոգսերին

Տաուշի շրջանի
գյուղերից է Զորաթաները։
Վերջին շրջանում
ադրբեջանցի ելուզակային
կազմավորումների թիրախ
դարձած հայկական
բնակավայրերից է այն։
Գյուղը պաշտպանվում է
միայն սեփական ուժերով։
Երիտասարդությունը
հայրենասեր է, թշնամուն
հակահարված տալու
վճռականությամբ լեցուն։
Բայց այսօր որսորդական
հրացաններով հաջողությամբ
չես կռվի տանկերով,
զրահամեքենաներով
և ավտոմատներով
զինված հակառակորդի դեմ։
Տաուշի շրջանի գյուղերը
ևս զենքի ու զինամթերքի
խիստ կարիք ունեն։
Բայց և այնպես,
չնայած սեփական հոգսերին
ու դժվարություններին,
զորաթանցիները
զորավիգ են մարտնչող
Արցախին։ Ազատամարտիկների
համար հանգանակություն է
կատարվում գյուղում։
Եվ հայրենասիրական
այդ գործին ակտիվորեն
մասնակցում են նաև
գյուղի միջնակարգ դպրոցի
աշակերտները։ Երեխաները
հավաքել են 1350 ռուբլի փող,
պատրաստել ծաղրոցներ։
Օգնությունը
շարունակվում է։